

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

16.09.2021թ. № 2 նիստի որոշմամբ

ԲՊՀ-ի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ՝



Կ. Վ. Հարությունյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ �ԱԺՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԲՊՀ) անվտանգության բաժինը (այսուհետ՝ Բաժին) ԲՊՀ կառուցվածքային ստորաբաժանում է:
2. Բաժինը ստեղծվում, վերակազմավորվում կամ լուծարվում է ԲՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ:
3. Բաժինն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԲՊՀ և սույն կանոնադրություններով և համապատասխան ոլորտը կարգավորող իրավական այլ ակտերով:
4. Բաժնի աշխատողները պարտավոր են ենթարկվել ՀՀ աշխատանքային օրենսդրությանը, «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներքին կարգապահական կանոններին, պահպանել աշխատանքային բարեվարքության կանոնները:
5. Սույն կանոնադրությունը ընդունվում, նրանում լրացումներ կամ փոփոխություններ կատարվում են ԲՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

II. �ԱԺՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի խնդիրներն են՝
 - 1) ապահովել ԲՊՀ բոլոր մասնաշենքերում հասարակական և ներքին կարգապահական կանոնների պահպանումը,
 - 2) ապահովել անցագրային ռեժիմը համապատասխան ձևաթղթով,
 - 3) իրականացնել մասնաշենքերի գույքի պահպանությունը:
7. Բաժնի գործառույթներն են՝

- 1) իրականացնել ՀՀ օրենսդրությանը չհակասող գործողություններ ԲՊՀ անվտանգության և ներքին կանոնները խախտող անձանց նկատմամբ,
- 2) իրականացնել հսկողություն ԲՊՀ մուտք գործող անձանց նկատմամբ,
- 3) համագործակցել ԲՊՀ աշխատողների և տարածքային ոստիկանության ծառայողների հետ,
- 4) բանավոր կամ գրավոր զեկուցել ԲՊՀ աշխատակազմի կառավարման և տնտեսական հարցերով պրոռեկտորին (այսուհետ՝ Պրոռեկտոր) ԲՊՀ ներքին կարգապահական կանոնները խախտած անձանց մասին,
- 5) ապահովել ԲՊՀ մասնաշենքերում գույքի պահպանությունը,
- 6) իր իրավասությունների շրջանակներում և ռեկտորի կամ Պրոռեկտորի հանձնարարությամբ իրականացնել այլ գործառույթներ:

III. ԲԱԺՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

8. Բաժինը ղեկավարում է Բաժնի պետը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ԲՊՀ ռեկտորը՝ Պրոռեկտորի ներկայացմամբ:
9. Բաժնի պետը ղեկավարում և վերահսկում է Բաժնի ընթացիկ գործունեությունը, մասնակցում է ԲՊՀ ռեկտորի և Պրոռեկտորի կողմից հրավիրվող նիստերին, խորհրդակցություններին, կատարում է աշխատանքի բաժանում Բաժնի աշխատողների միջև, ներկայացնում է տարեկան հաշվետվություն՝ Բաժնի գործունեության վերաբերյալ, գրավոր կամ բանավոր եղանակով զեկուցում է վերադասին միջադեպերի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և իրավական այլ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:
10. Բաժնի պետը պատասխանատու է Բաժնի առջև դրված աշխատանքների և դրանց որակի պատշաճ և արդյունավետ կատարման համար:
11. Բաժնի աշխատողներն աշխատանքի ընդունվում և ազատվում են ԲՊՀ ռեկտորի հրամանով՝ Բաժնի պետի ներկայացմամբ:
12. Բաժնի աշխատողները կատարում են իրենց անմիջական ղեկավարի հանձնարարականները:

IV. ԲԱԺՆԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

13. Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում կամ լուծարվում է ԲՊՀ հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ: